

Արձանագրություն թիվ 1

գ. Ծափաթաղ

30.01.2012 թ.

Համայնքի ղեկավարի 2011թվականի տարեկան կատարած աշխատանքների մասին:

Մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբան Ն. Ղազարյանը, համայնքի ավագանին և բնակչությունը:

Օրակարգ- Համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվություն:

Կատարված աշխատանքները գնահատվեցին բավարար:
(Կից ներկայացվում է տարեկան հաշվետվությունը):

Հանձնաժողովի նախագահ՝ ավագանու անդամ

Ա.Գաբրիելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար

Ե. Բաղյան

Հաշվետվություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ համայնքի ղեկավարի 2011 թվականի տարեկան կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր, ավագանու անդամներ:

Իմ կողմից ներկայացվող հաշվետվությունն ընդգրկում է 2011 թվականին Ծափաթաղ համայնքում կատարված աշխատանքներն ու բյուջեի կատարողականը:

Ծափաթաղ համայնքն ունի 205 տնտեսություն, ապրում են 417 մարդ, որոնց 80 տոկոսը փախստականներ են: Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» և « Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով Ծափաթաղ համայնքի ղեկավարի աշխատակազմն իր գործունեությունը հիմնականում նպատակաուղղել է համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, ինչպես նաև համայնքում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավմանը:

2011 թվականին համայնքում իրականացվել են հետևյալ ծրագրերը

1. Իրականացվել են համայնքի համար շատ կարևոր գլծավոր հատակագծի մշակման աշխատանքները, որը ըստ կնքված պայմանագրի ավարտին կհասցվի 2012 թվականին:
2. Գյուղապետարանի և բնակիչների համատեղ ուժերով կազմակերպվել են Ծափաթաղի համար ամենամյա ավանդույթ դարձած շաբաթօրյակները, մաքրվել է համայնքի ամբողջ տարածքը, կազմակերպվել է աղբահանությունը, թաղամասերում՝ բնակիչներին հարմար և մատչելի տեղերում տեղադրվել են աղբամաններ:
3. Վերացվել են խմելու և ոռոգման ջրագծերի վթարները: Պարբերաբար կատարվել է խմելու ջրի ախտահանում:
4. Կարևորելով ուսման դերն ու նշանակությունը՝ երեխաների կրթական մակարդակը բարձրացնելու և նրանց ընտանիքներին աջակցելու նպատակով, գյուղապետարանի կողմից վճարվել են բոլոր դպրոցականների դասագրքերի

վարձավճարները, կազմակերպվել են տարբեր տոնահանդեսներ և համերգներ:

Միաժամանակ իրագրվում է, որ չնայած կատարված աշխատանքներին, համայնքում առկա են թե սոցիալական, թե տնտեսական հիմնախնդիրներ, որոնք ընդգրկված են համայնքի հեռանկարային պլաններում և ներկայացված են համապատասխան մարմիններին: Դրանցից առաջնահերթ են՝ համայնքի գազաֆիկացումը, բնակիչների բնակարանային ապահովումը, ինքնահոս գործող 5-կմ ոռոգման ջրագծի վերանորոգումը:

Ծափաթաղի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 4 հոգուց: Համայնքն ունի 5 ավագանու անդամ: Համայնքի վարչական տարածքը 2088.28 հա է , որից 273.58 հա՝ վարելահող, 427.9 հա՝ արոտ, 91.78 հա՝ բնակավայր, 531.15 հա՝ պետական անտառային հողեր, մնացածը՝ այլ:

2011 թվականին Ծափաթաղ համայնքի բյուջեն կազմվել է պլան 7215500 դրամ, փաստացի կատարվել է 7220553 դրամ, 101 տոկոսով:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջեի եկամուտներն ուղղվել են ապարատի պահպանման վրա, իսկ տնտեսված գումարը 742000 դրամ, ուղղվել է 2012 թվականի համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքային գլխավոր հատակագծի աշխատանքների իրականացման համար:

Որպես համայնքի ղեկավար հավաստիացնում եմ , որ անհրաժեշտ բոլոր միջոցները կձեռնարկվեն համայնքի առջև դրված սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, համայնքի բյուջեի եկամտային մասի հնարավոր բարձր տոկոսի կատարման ուղղությամբ:

Ծափաթաղ համայնքի ղեկավար՝

Թ. Բոյախյան